

Ակներեւ թունաւոր մնկիկի մարդու թուքի մէջ ներկայութիւնը կախումն ունի մեր մարտզական գործարանից և նշումնէ կայանում այդ կախումը եւ ստույգ է արդեօք՝ որ միշտ կերակուր ընդունելով մնկիկը քանառամեց մեր թուքից — այդ հարցը, որի վրա արտօն են Պատարի փորձերը մինչեւ ցայտման էն տալիս գեռոց մի հաստատ պատասխան։ Խոյնովէս յեն տալիս նրանք պատասխան եւ միւս գեռ աւելի էական հարցին, այսինքն թէ թքի մէջ նոր գանձ թունաւոր մնկիկը — թունաւոր է արդեօք միայն վերբերութեամբ դէպի նապատակական գործարանը, թէ՛ վերբերութեամբ դէպի բոլոր կենդանական գործարանները առ հասարակւորոց թվում եւ դէպի մարդու գործարանը։ Կարող ենք արդեօք մենք մեր թքով թունաւորել մեր մերձաւորին, ինչպէս մենք թունաւորումենք նրանց ստրիխինինով (стрихинъ засас թունաւոր նիւթէ), մկան դեղով, սինիլ թրթուատով (спициальная кислота) եւլին թէ՛ մենք կարող ենք թունաւորել նրանով միայն նապատակականին։ Ամենոյն դէպիքում Պատարի առաջուայ փորձերը ցայց տուին գոնէ թէ՛ ծովային խողիկի և կառագածի համար ոչ մի իսկական վասնգ չի կարող ունենալ մարդոյ թուքը։ Պատարը շարունակումէ իւր փորձերը թուքի մնկիկի վրա և իւր ժամանակին մենք կը ծանօթացնենք ընթերցողներին այդ հետաքրքիր հետազօտութիւնների առաջայ հետեւանքների հետ։

(Թարգմանէաց) Դաւաբն առաջ Գաւաբն և Տաւաբն առաջ։

**ԱԿՐԵՄԻ** ԲՈՐՅԱԿԱՆ ԵԽԱԿԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ.

ԱԿԱԴԵՄԻ

Գտղվիոյ մի քանի կսղմերը դիեցիկ մանկանց համար, փոխանակ ամուսնացեալ կանանց, աղջիկ մայրեր (այսինքն դեռ չամուսնացած՝ մայր եզրդ աղջիկներ) իբրև սահման գործածելու մասին՝ ցոյց տրաւած ներողամառ թեան մի վրայօք տեղեկագիր ներկայացուած լինելով Գաղղիոյ Ակադեմեային Հոկտեմբերի 15ի նստին, անուանին ծիւլ—Սիմօն, Ակադեմեայի անդամ՝ այս

խնդրոյն վրայ հետեւեալ իմաստան դիտողութիւնն ու խորահրդածութիւնը կ'անէ:

\* Դիւրին է, կ'ասէ, ինչպէս արած է Առուսօ, յառաջ քերել այս կետը թէ՝ մայրերուն հարկ անհրաժեշտ է՝ որ իրենք կաթ տան իրենց զաւակացը. սասոյգ է թէ՝ մի մայր՝ որ իւր զաւակը ուրիշ կնոջ խնամոցը կ'թողու, իւր ամենէն առաջին պարտականութեան դէմ կ'մեղանչէ, եւ իւր ամենէն թանկագին իրաւունքը կ'լքանէ, այն է մայրական իրաւունքը, նաև ոչ նուազ սոսոյգ է թէ՝ այն կինն՝ որ իւր սախնքէն կ'խլէ իւր զաւակը օտարի ստեռնցը յանձնելու, բնութեան օրէնքը կ'զանցանէ: Խնդիրն ոչ այնքան սոցագէմ բացագանցելուն՝ որքան սոյն չարիքին մէկ գարմանը գտնելաւն մէջ կ'կայանայ:

\* Եթէ մայրը չունի կաթ, եթէ մանկան կենաց դէմ վտանգ կ'սպառնայ, առանց վարանման եւ առանց ուրիշ բան մտածելու, իսկոյն վինտաելու կ'ելնես մի կին՝ որ կարող լինի քեզ այնքան սիրելի եղող այդ արարածն ազատել, փրկել անսուազութենէ, եւ ամենէն աւելի նախապատռութիւնն այն կնոջ կ'տաս, որն որ ամենէն լաւ առողջական պայմաններն կ'կրէ յինքեան: Բարւոք կենցազոյ եւ բարի վարուց վկայական վինտաելը՝ այդիբրեւ երկրորդական բան՝ կ'մնայ վերջը: Մարդս նախ եւ առաջ զինքն ստիլող հարկին կհնազանդի, այն հարկին՝ որ ոչ մտածելու ժամանակ կ'թողու եւ ոչ ընտրութիւն անելու:

\* Նատ անգամ կ'պատահի՝ որ մի ստիտուլի բնուրութեան մէջ՝ ամուսնացեալ կնոջմէն աւելի աղջիկ — մօր մի նախապատռութիւն կ'տրուի, նորա համար՝ որ գլխաւորապէս սանտուաց այրերն, յիրաւի կամ յանիրաւի, զզուելի համորում մ' ունին: Գիտէք սակայն, որ այդ անէտալ կինը, որում տեղի մի կ'տայք ձեր տան մէջ, եւ զոր կողակցին մայրականութեանը կ'ընկերացընէք՝ սահմանելի անկարելի իմն աստիճանաւ, լաւ գիտէք՝ որ այդ պատրեալ կինը մանկան վրայ ազգեցութիւն իմն ի գործ պիտի դնէ, եւ որ այդ ազգեցութեան ներքեւ յետոյ պիտի յօքինուի սպայն:

\* Ուրեմն մըն է այն միջոցը, որով կաթ չունեցող մի կին կարենայ կաթ ունենալ, կամ թէ լաւ կաթ ունեցող մի կին մերժանիբարոյականացեալ կին մ' եղած լինի: — Պէտք եմ ըսել թէ՝ այս մեր խնդրած միջոցը՝ ոչ օրէնքը կարող է մեղ տալ իւր պա-

տուէրներովին, ոչ գիտութիւնը՝ իւր գիւտերովն եւ ոչ բժշկութիւնն՝ իւր հնարքովը:

\*Ա. յաղիսի միջոց մի՛ կարենայ գոտիելու նորատակաւ իմ՞ բոլոր արած խուզարկութիւնքս, բոլոր խարխափաղնութիւնքս, եւ ամենայամոռ բոլոր մոտածումներս, կ'շարունակէ ձիւլ — Ոիմոն, բնաւ ո եւ է գարման մի ի յայտ չածեցին ինձ այս չարեաց դէմ: Յետ երկար խոկմանց, վերջապէս եկայ այն համոզմանը յանդելու թէ՝ բարոյական ոյժը զօրութեանց ամենէն զօրեղագոյնն է, թէ նա է միայն ճշմարիտ զօրութիւնը:

\*Կաթ չունեցող կինը՝ բժշկի գարմաններունը չը բժշկուիր. կրյիմային զօրութեամբն եւս չկրնար կազգութիւն, իսկ այդ կինը կ'ապրի այնպիսի բարոյական մտնոլորտի մէջ՝ որ անկարող է պահպանել եւ սնուցանել կեանքը, այդ կինը ոչ կմուածէ եւ ոչ իսկ կճանչէ թէ՝ ի՞նչ են իւր պարտիքը, թէ ո՞րն է իւր պարտեաց տմենէն նուիրականը, նա ոչ այլ ի՞նչ կ'մուածէ, բայց եթէ՝ հոճոյից այցելութեանց պարահանդէսներու, թատրոններու եւ գիշերային զուարձութեանց իղձերն գոհացնել: Բոլոր այս մրտածմանց մէջ իւր բարոյական տռողջութիւնը աւելի շուտ կ'կորսուի նախ քան զիւր ֆիզիքական առողջութիւնն: Ամեն բանէ առաջ զուարձութիւն, ապա պարտականութիւնք, այն եւս անհաճոյ եւ անախորժ պէտք չէ որ լինի: Ահաւասիկ կանայք՝ որք չկարեն եւ ոչ իսկ պէտք են մայր լինել:

\*Եւ ի՞նչպէս ոյժ եւ առողջութիւն տալ կը խորհին այսպիսի մի սերնդեան, որոյ հօգին արգէն թօշնել է: Որպիսի՞ առողջ եւ կենդանարար գաստիարակութիւն կ'փնտռեն այս ապականութիւնն մաքրելու եւ ուղիւրու համար:

\*Գիտէք արդէն թէ՝ դուք ձեր մէջէն մէկը պատուիրակ յուղարկեցիք Հանրային Կրթութեան բարձրագոյն խորհուրդը, որ աղջկանց վարժարանաց վերաբերեալ ուսմանց ծրագիրներն կատարելագործելու աշխատութեանն օժանդակէ եւ գործակցի: Թէ ի՞նչքան ֆիզիք, չի՞ն, ալի՞նչորս եւ այլն բարդած եւ գիզած են անդանի հաւատալի բան է: Գիտնական տարրալուծին (chimiste) մէկը շատ իմաստութեամբ կ'ասէք. — \*Պարօններ, ալ հերիք է այդքան շիմի, կ'աղաշեմ: եւ տակաւին կ'յաւելուին անդանօր եւ երկրաչափութիւն եւ բնական պտտմութիւն, այն աստիճան՝ որ մէջերնէն մին, այլ եւս համբերութիւնն սպառելով գոչեց:

ևս եթէ մանչ լինէի, այսքան բան գիտցող աղջիկ մ' ինձի կին  
չէի ուզեր առնուլ :

Առողջը խօսելու համար՝ ես եւս այդ կարծիքէն եմ, այժ-  
մեան աշխարհի ունայնամիտ՝ եւ ինքղինքնին զուարճութեանց,  
հաճոյից եւ չնչին բաներու տուող կանոնց փոխան՝ դուք ձեր  
այդ ուսմանց յայտագիրներավն ոչ այլ ինչ պիտի ունենաք, բայց  
եթէ իրենք իրենց վրայ մեծ համարում ունեցող, կատարելա-  
պէս իւրեանց բոլոր էրա-անցը վերահասու եւ իրազէկ անհան-  
գուրժելի կանայք, որք այժմեան կանանց չտի եւս չպիտի գիտ-  
նան իրենց ոլորտականունեանց առաջը խոնարհիլ:

Ասեմ ձեզ, այդ չարեաց գարմանը՝ բարոյականութեան,  
կրօնի, փիլիսոփայութեան մէջ պէտքէ որոնել, սոցանէ պարու-  
է խուրել այդ գարմանը, բարւոյն գիտակցութիւնն ու ճանա-  
չումը եւ պարտականութեան սէրը եւ եթ կարող են այդ թա-  
ռամեալ բնութիւններն վերակենդանացնել: Համոզումն է՝ որ  
զօրութիւն ոլիտի տայ, Հոգին է՝ որ զմարմինն պիտի փրկէ, Հա-  
ւատն է՝ որ զընկերութիւնն պիտի փրկէ:

Փամ այս քարոզած միջոցս շատ հասարակ բան պիտի թուի  
ձեզ, եւ կվախնամ՝ որ չափազանցախօս պիտի երեւիմ՝ եթէ ասեմ  
թէ ստուաւաց այդ պատուհանը բժշկելու, եւ կանանց իւրեանց  
մայրութեան զօրութիւնն ու կսրովը տալու համար պէտքէ նախ  
ուսուցանել իւրեանց՝ պաշտել զնաւուած եւ սիրել բարոյակա-  
նութիւնն, բայց ես՝ մի փիլիսոփայ ըլլալովս հանգերձ, ամենայն  
խոնարհութեամբ կը խոսառվանիմ թէ, ես քան զայս աւելի լաւ  
եւ աւելի ազգու ոչինչ գտի: Պ. տեղեկաբերն, որ լաւ տնտեսա-  
գէտ եւ միանգամայն քաջ բարոյագէտ մի է, հաւաստի եմ թէ՝  
չպիտի անգոսնէ իմ այս գտած գարմանս, բայց շատ կցաւիմ  
որ յայսմանէ զատ չկայ մի ուրիշ գարման մեղ ցոյց տրուելու:

Ճիւլ Սիմոնի այս խօսքերն, աւելորդ է ասել թէ, Ակադեմիայի  
բոլոր անդամոց ծափահարութեանցն ու գրուատանացը կար-  
ժանանան: